

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԱԱԾ ԳՀԾՁԲ-19/7»**

ք. Երևան

« 15 » 04 2019 թ.

Սոցիալական ապահովության ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Վ. Բաբաջանյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա. Լալայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:



2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն ընդհանուր գինը կազմում է 5686880 (հինգ միլիոն վեց հարյուր ութսունվեց հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ընդ որում՝

1-ին չափաբաժնի համար՝ 4186880 (չորս միլիոն հարյուր ութսունվեց հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

2-րդ չափաբաժնի համար՝ 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


Սոցիալական ապահովության ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011556355



/ստորագրություն/
Կ.Տ



ԿԱՏԱՐՈՂ

Ֆլեշ Մոտորս ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
ՀՎՀՀ 00873228
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 1510012745550100
Ա. Լալայան


/ստորագրություն/
Կ.Տ



ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

ՀՀ դրամ

		Ծառայություն				մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	5011130-1	<p>1 հատ Nissan Teana (արտադրված 2011 թ-ին), 4 հատ Chevrolet Cruze (բոլորն էլ արտադրված են 2011 թ-ին), 1 հատ Nissan Maxima (արտադրված 2006 թ-ին) և 1 հատ Volkswagen Passat (արտադրված 2007 թ-ին) ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ ըստ կից ներկայացված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրի և պայմանագրով հաստատված գնի սահմաններում՝ ըստ պայմանագրի գնացուցակի*:</p> <p>Ծառայության մատուցումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է ըստ Պատվիրատուի պահանջի՝ տրանսպորտային միջոցը Կատարողի տեխնիկական կայանում գրանցվելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:</p>	դրամ	4186880	1	Ք. Երևան, Նալբանդյան 13, և/կամ Կատարողի տեխնիկատարկման կայան	պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2019 թվականի դեկտեմբերի 15-ը
2	5011130-2	<p>6 հատ ՎԱՋ 21074, 3 հատ Վազ 21065, 2 հատ Վազ 21213, 1 հատ Վազ 21214, 1 հատ Վազ 21101 և 1 հատ Գազ 3102 ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ ըստ կից ներկայացված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրի և պայմանագրով հաստատված գնի սահմաններում՝ ըստ պայմանագրի գնացուցակի*:</p> <p>Ծառայության մատուցումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է ըստ Պատվիրատուի պահանջի՝ տրանսպորտային միջոցը Կատարողի տեխնիկատարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:</p>	դրամ	1500000	1	Ք. Երևան, Նալբանդյան 13, և/կամ Կատարողի տեխնիկատարկման կայան	պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2019 թվականի դեկտեմբերի 15-ը

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆԱՑՈՒՑԱԿ*

h/h	SU-1 (տեխնիկական գնման / դիագնոստիկական) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) / չափաբաժինները	
		1-ին չափաբաժին	2-րդ չափաբաժին
		1 հատ Nissan Teana (արտադրված 2011 թ-ին), 4 հատ Chevrolet Cruze (բոլորն էլ արտադրված են 2011 թ-ին), 1 հատ Nissan Maxima (արտադրված 2006 թ-ին) և 1 հատ Volkswagen Passat (արտադրված 2007 թ-ին)	6 հատ ՎԱԶ 21074, 3 հատ Վագ 21065, 2 հատ Վագ 21213, 1 հատ Վագ 21214, 1 հատ Վագ 21101 և 1 հատ Գագ 3102
	Առաջարկված գինը՝ ներառյալ հարկերը և տուրքերը /ՀՀ դրամ/	Առաջարկված գինը՝ ներառյալ հարկերը և տուրքերը /ՀՀ դրամ/	
1	2	3	4
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները		
1	Բռնկման համակարգի ստուգում	0	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0	0
3	Յուղման համակարգի ստուգում	0	0
4	Արտացման համակարգի ստուգում	0	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0	0
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0	0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0	0
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0	0
13	ABS համակարգի ստուգում	0	0
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0	0
15	Դեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0	0
16	Թափքի վիճակի ստուգում	0	0
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները		
	1. Շարժիչ		
1	Շարժիչի հանում և տեղադրում	40000	40000
2	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	0	0
3	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	40000	80000
4	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	0	0
5	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	0	0
6	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	5000	5000
7	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	0	0
8	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	5000	5000
9	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	5000	5000

10	Հրիչների կամ հիդրո-հրիչների փոխարինում 1 կ-տ	0	0
11	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	0	0
12	Ծնկածն լիսեռի հղկում	0	0
13	Ծնկածն լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	0	0
14	Ծնկածն լիսեռի ներդրակ-ների փոխարինում 1 կ-տ	0	0
15	Ծնկածն լիսեռի ատամնանիվի փոխարինում	0	0
16	Ծնկածն լիսեռի ուղղում	0	0
17	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	5000	5000
18	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	5000	5000
19	Շարժիչի բլադի փոխարինում	0	0
20	Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка)	10000	10000
21	Մխոցի փոխարինում 1 հատ	5000	5000
22	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10
23	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10
24	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	10	10
25	Փոկանիվի փոխարինում	10	10
26	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	20000	15000
27	Շարժիչի շղթայի փոխարինում	10	10
28	Շարժիչի կարտերի նորոգում (եռակցում)	10	10
29	Շարժիչի կարտերի միջադիրի փոխարինում	10	10
30	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	10	10
31	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	10	10
32	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	10	10
33	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	10	10
34	Յուղի ծորակի փոխարինում	10	10
35	Օդաքաշակ փողրակի փոխարինում	10	10
36	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10
37	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	10	10
38	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10
39	Շարժիչի կափույրի փոխարինում	10	10
40	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	10	10
41	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	10	10
42	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	10	10
43	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	10	10
44	Ատամնանիվի փոխարինում	10	10
45	Ատամնանիվի փոկի փոխարինում	0	0
46	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	0	0

47	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	10	10
48	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	10	10
49	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	10	10
50	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	10	10
51	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	10	10
52	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում	10	10
53	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	5000	3000
54	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	10	10
55	Շարժիչի գամասեղի փոխարինում	10	10
56	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	10	10
57	Գլխիկի հեղույսի փոխարինում	10	10
58	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում	10	10
59	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	10	10
60	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	10	10
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
61	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	2000	1000
62	Ավտոմեքենայի յուղում	10	10
63	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	8000	3000
64	Յուղի ռադիատորի փոխարինում	0	0
65	Յուղի ռադիատորի նորոգում	0	0
66	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	0	0
67	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	0	0
68	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	12000	6000
69	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	8000	2000
70	Օդի գտիչի փոխարինում	2000	500
71	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10
72	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	10	10
73	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	10	10
74	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	5000	4000
75	Բոցամուղի կոդավորում	10	10
76	Ինժեկտորի բոցամուղիխտաբուկերի փոխարինում	10	10
77	Բենզամղիչի փոխարինում	8000	2000
78	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	10	10
79	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10
80	Բռնկման կարգավորում	10	10
81	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10
82	Ղեկավարման բլոկի վերանորոգում	10	10

83	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10
84	Վառելիքի բաքի մաքրում	10	10
85	Օդի ծախսի տվիչի փոխարինում	10	10
86	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	10	10
87	Ջրի խողովակի, փողբակի փոխարինում	10	10
88	Բենզոբաքի բենզոմոդիչի ցանցի փոխարինում	10	10
89	Բենզոբաքի բենզոմոդիչի ցանցի մաքրում	10	10
90	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	10	10
91	Տվիչի փոխարինում	1000	1000
	3. Սառեցման և արտածման համակարգ		
92	Հովհարի փոխարինում	1000	1000
93	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000	3000
94	Ուղիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	12000	10000
95	Ուղիատորի նորոգում	10	10
96	Շերտափեղկի փոխարինում	10	10
97	Շերտափեղկի կառավարման անձգաձողի փոխարինում	10	10
98	Ընդարձակող բաքի փոխարինում	100	100
99	Ընդարձակող բաքի փողբակի փոխարինում	10	10
100	Ջրի ծորակի փոխարինում	100	100
101	Հովացման համակարգի ռետինե փողբակի փոխարինում	2000	1000
102	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000	1000
103	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	15000	5000
104	Վառարանի ռադիատորի նորոգում	0	0
105	Վառարանի շարժիչի փոխարինում	5000	3000
106	Թերմոստատի փոխարինում	8000	5000
107	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	15000	8000
108	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	0	0
109	Գեներատորի փոկի փոխարինում	5000	2000
110	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	2000	2000
111	Ջրի ռադիատորի վերանորոգում	0	0
112	Թերմոստատի միջադիրի փոխարինում	0	0
113	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10
114	Խլարարի 1 հատխողովակի փոխարինում	10	10
115	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	10	10
116	Խլարարի ներդիրի փոխարինում	10	10
117	Խլարարի կախոցի փոխարինում	10	10
118	Հովացման հեղուկի փոխարինում	10	10
	4. Կցորդում և ՓՏ		

119	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
120	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	0	0
121	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	0	15000
122	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	10
123	Կցորդման ճուպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	10
124	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխա րինում	0	10
125	Կցորդման երկժանի փոխարինում	0	10
126	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	200000	30000
127	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	0	0
128	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	0	0
129	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	0	0
130	ՓՏ-ի հանում և տեղադրում	50000	15000
131	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	10	10
132	ՓՏ-ի պատյանի փոխարինում	10	10
133	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	10	10
134	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	10	10
135	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	10	10
136	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	10	10
137	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	10	10
138	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	10	10
139	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	8000	2000
140	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	0	0
141	ՓՏ-ի յուղի փոխարինում	15000	1000
142	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	0	0
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ			
143	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում	0	15000
144	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
145	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	0	0
146	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	0	0
147	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	0	0
148	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	0	0
149	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	0	0
150	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	0	0
151	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	0	0
152	Բաշխիչ տուփի երկժանի փոխարինում	0	0
153	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	0	0

154	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	0	0
155	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	0	0
156	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	5000
157	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	0	3000
158	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
159	Տվիչի փոխարինում	0	0
160	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	0	0
161	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	3000
6. Առջևի և հետևի կամրջակներ			
162	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
163	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	0	3000
164	Առջևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում կամ փոխարինում	0	3000
165	Առջևի կամրջակի կիսասռնու առանցքակալի փոխարինում	0	2000
166	Առջևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	0	2000
167	Կամրջակի յուղի փոխարինում	0	2000
168	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	2000
169	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	0	0
170	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
171	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	0	0
172	Հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
173	Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի փոխարինում	0	0
174	Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	0	0
175	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
176	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	0	0
177	Հետևի կամրջակի բլոկավոր-ման համակարգի նորոգում	0	0
178	Կամրջակի տվիչի փոխարինում	0	0
7. Կախոց			
179	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	15000	5000
180	Չախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում կամ փոխարինում	8000	3000
181	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	0	0
182	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	3000
183	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	3000

184	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	0	0
185	Անվակունդի գամասեղի և հեղուսի փոխարինում(մեկ անիվի համար)	0	0
186	Չախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	0	0
187	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	2000	1000
188	Առջևի զսպանակի փոխարինում	0	0
189	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000	5000
190	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	0	0
191	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	3000
192	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	5000	3000
193	Ներքևի լծակի հեղուսի փոխարինում	0	0
194	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	0	0
195	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
196	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	0	0
197	Վերևի լծակի հեղուսի փոխարինում	0	0
198	Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում 1 հատ	0	0
199	Գնդե հողակապերի պատյանի փոխարինում	0	0
200	Գնդե հողակապերի փոխարինում	5000	3000
201	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
202	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	4000	2000
203	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	4000	2000
204	Կայունարարի կալունակի փոխարինում	3000	3000
205	Հետևի զսպանակների փոխարինում	0	0
206	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
207	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
208	Զսպանի փոխարինում	0	0
209	Զսպանի վռանների փոխարինում 1 հատ	0	0
210	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	6000	4000
211	Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	0	0
212	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1 հատ	5000	3000
	8. Ղեկային մեխանիզմ		
213	Ղեկասյունակի (USuSվՍՈ) հիմնական նորոգում,	50000	0
214	Ղեկասյունակի (USuSվՍՈ) արորիկի փոխարինում	0	0
215	Ղեկասյունակի (USuSվՍՈ) առանցքային սռնու փոխարինում	0	0
216	Ղեկասյունակի (USuSվՍՈ) խաչուկների փոխարինում	5000	5000
217	Ղեկասյունակի (USuSվՍՈ) վերանորոգման հավաքածուի փոխարինում	0	0

218	Ղեկապունակի (USuSվՍՈ) քանդում, արատավորում, հավաքում	0	0
219	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	0	0
220	Ղեկապունակի պատյանի փոխարինում	0	0
221	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	0	0
222	Ղեկային մեխանիզմի ղեկապունակի ամրացման անուրի փոխարինում	0	0
223	Ղեկային ծողի առանցքակալի փոխարինում	0	0
224	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	0	0
225	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	0	0
226	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում	0	0
227	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
228	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	0	0
229	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	0	0
230	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
231	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	5000	0
232	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	0	0
233	Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածույի փոխարինում	0	0
234	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
235	Ղեկային ծողի գնդե հողակապի նորոգում	0	0
236	Ղեկային ձգածողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
237	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	0	0
238	Ղեկային ձգածողի ծայրակալների փոխարինում	0	0
239	Հիդրոուժեղարարի համա-կարգի յուղի փոխարինում	0	0
9. Արգելակային համակարգ			
240	Վակումային ուժեղարարի փոխարինում	2000	2000
241	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	0	0
242	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	2000
243	Գլխ. գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	0	0
244	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	2000
245	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում,	0	0
246	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000	3000
247	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000	3000
248	Առջևի սուպպորտի վերանորոգում	3000	3000
249	Հետևի սուպպորտի վերանորոգում	3000	3000
250	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	10	10

251	Արգելակի վթարային արգելա-հանման լծակի նորոգում	10	10
252	Արգելակային փողրակի փոխարինում	500	500
253	Արգելակային կոճղակների փոխարինում	6000	5000
254	Արգելակային համակարգի օդահանում	1500	1500
255	Մկավառակային կոճղակների փոխարինում	0	0
256	Թմբուկային կոճղակների փոխարինում	0	0
257	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4000	3000
258	Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	7000	7000
259	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	4000	3000
260	Հետևի արգելակային թմբուկա հղկում 1 հատ	0	2000
261	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	500	500
262	Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	1000	1000
263	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	100	100
264	Ձեռքի արգելակի ճոպանի վերանորոգում	100	100
265	Հետևի արգելակների կարգավորում	100	100
266	Արգելակային հեղուկի փոխարինում	1000	1000
10. էլեկտրասարքավորում			
267	Գեներատորի հանում, տեղա-դրում կամ փոխարինում	8000	7000
268	Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում	0	0
269	Գեներատորի ստատորի փոխարինում	0	0
270	Գեներատորի ռոտորի փոխարինում	2000	2000
271	Գեներատորի լիցքավորման ռելեի փոխարինում	6000	5000
272	Գեներատորի դիոդային կամրջակի փոխարինում	1000	1000
273	Գեներատորի առանցքակալի փոխարինում	1000	1000
274	Գեներատորի փոկանիվի փոխարինում	100	100
275	Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում	10	10
276	Մեկնարկիչի խարխալի փոխարինում	10	10
277	Մեկնարկիչի իրանի փոխարինում	10	10
278	Մեկնարկիչի բռնիչի փոխարինում	10	10
279	Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում	7000	7000
280	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	10	10
281	Մեկնարկիչի ռելեի փոխարինում	10	10
282	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	2000	2000
283	Ազդանշանի կարգավորում	0	0
284	Ազդանշանի հանում և տեղա-դրում կամ փոխարինում	10	10
285	Առջևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10
286	Սարքերի պանելի հանում և տեղադրում	10	10

287	Հետևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10
288	Առջևի լապտերների կարգավորում	10	10
289	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	10	10
290	Վառոցքի կոճի հանում և տեղադրում	3000	10
291	Ինդուկցիոն կոճի հանում և տեղադրում	10	10
292	Վազքաչափի փոխարինում	10	10
293	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10
294	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	10	10
295	Ապակեվազիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10
296	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10	10
297	Ապահովիչների փոխարինում	10	10
298	Ապակեամբարձիչների փոխարինում	10	10
299	Ապակեամբարձիչների շարժիչի փոխարինում	10	10
300	Էլեկտրական տվիչների փոխարինում	500	200
301	Էլեկտրական անջատիչների փոխարինում	500	200
302	Մարտկոցի կլեյմաների փոխարինում	10	10
303	Ակումյատորի դրական էլեկտրոլարի փոխարինում	10	10
304	Ակումյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում	10	10
305	Էլ/ կոճակի փոխարինում	10	10
306	Էլեկտրական շտեյկերի փոխարինում	10	10
307	Ջրի ցողիչի փոխարինում	10	10
308	Բեռնախցիկի փականի փոխարինում	10	10
309	Հագոցի փականի փոխարինում	10	10
11. Ավտոմեքենայի սրահ			
310	Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում	10	10
311	Դռան փականի փոխարինում	10	10
312	Բեռնախցիկի ճոպանի փոխարինում	10	10
313	Լամպի փոխարինում	1000	1000
314	Ամրակներ (կլիպս) փոխարինում 1հատ	10	10
12. Այլ ծառայություններ			
315	Եռակցման աշխատանքներ <i>գին 1սմ (գծ.մ) համար</i>	5000	5000
316	Խառատային աշխատանքներ <i>գին 1 կտորի համար</i>	5000	5000
317	Փականագործական աշխատանքներ <i>գին 1 ժամ աշխատանքի համար</i>	5000	5000
318	Առջևի կամ հետևի անվաբացքի կարգավորում	6000	6000
319	Անիվի հանում և տեղադրում	1000	1000
320	Անվադողի վերանորոգում	500	500
321	Անիվի բալանսավորում	1000	1000
322	Քարշարկի ծառայություն <i>գին 1կմ, համար</i>	1500	1500

	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		
	1.Շարժիչ		
1	Շարժիչի բլոկ	0	0
2	Շարժիչի գլխիկ	0	0
3	Բարձիկ	40000	15000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	5000	5000
5	Շարժիչի միջադիրների կոմպլեկտ	0	25000
6	Շարժիչի փական դուրս մղող	5000	3000
7	Շարժիչի փական ներս մղող	5000	3000
8	Շարժիչի փականի խտաբուկ	5000	2000
9	Փականի զսպանակ	0	0
10	Ծնկածն լիսեռ	0	0
11	Ծնկածն լիսեռի խտաբուկ առջևի	5000	3000
12	Ծնկածն լիսեռի խտաբուկ հետևի	5000	3000
13	Ծնկածն լիսեռի արմատական ներդիրներ	5000	5000
14	Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդիրներ	5000	5000
15	Մխոց	0	0
16	Մխոցային օղակներ	10000	10000
17	Մխոցային մատ	10	10
18	Ատամնանիվ	10	0
19	Ատամնավոր փոկ	30000	15000
20	Շարժիչի կափույր	10	10
21	Շարժիչի կափույրի կափարիչ	10	10
22	Շարժիչի շղթա	15000	10000
23	Շարժիչի պաշտպանիչ	10	10
24	Փոկի ձգիչ	10	10
25	Հիդրոձգան	10	10
26	Հրիչ	10	10
27	Շարժիչի հիդրոհրիչ	10	10
28	Շարժիչի կալուն	10	10
29	Շարժիչի հանդարտիչ	10	10
30	Շարժիչի հոլովակ	10	10
31	Շարժիչի հոլովակի առանցքակալ	10	10
32	Շարժիչի առջևի կափարիչ	10	10
33	Շարժիչի վերևի կափարիչ	10	10
34	Շարժիչի վերևի կափարիչի միջադիր	10	3000
35	Թափանիվ	10	10
36	Շարժաթև	10	10
37	Ատամնանիվ բաշխիչ լիսեռի	10	10
38	Ատամնանիվ ծնկածն լիսեռի	10	10
39	Փոկանիվ ծնկածն լիսեռի	10	10

40	Փոկանիվ	4000	2000
41	Սուխարիկ փականի	10	10
42	Գլխիկի բուլտ	10	10
43	Ծնկածն լիսեռի բուլտ	10	10
44	Պարկուճ (չՌսՖջՌ)	10	10
45	Քարտեր	10	10
46	Շարժիչի ատամնավոր փոկ	10	10
47	Պատյան ատամնավոր փոկի	10	10
48	Փական յուղի տարայի	10	10
49	Խուփ ընդարձակման բաքի	10	10
50	Խուփ շարժիչի	10	10
51	Թաթիկ յուղի մղիչի	10	10
52	Բարձիկ փ/տուփի	10	10
53	Յուղի մղիչ	10	10
54	Միջադիր յուղի մղիչի	10	10
55	Յուղի ծորակ	10	10
56	Շարժիչի յուղի արանքաչափիչ	10	10
57	Շարժիչի յուղի արանքաչափիչի իրան	10	10
58	Կափույրի միջադիր	10	10
59	Քարտերի միջադիր	10	10
60	Շարժիչի բաշխիչ լիսեռ	10	10
61	Բ/լիսեռի կափարիչ	10	10
62	Բ/լիսեռի խտաբուկ	10	10
63	Շարժիչի բ/լիսեռի ականոց	10	10
64	Շարժիչի բ/լիսեռի երիթակ	10	10
65	Ուղղորդիչ վռան	10	10
66	Շարժիչի գամասեղ	10	10
67	Գլխիկի միջադիր	10	10
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
68	Յուղ շարժիչի հանքային, 1/	2000	2000
69	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1/իտր	4000	3000
70	Յուղ շարժիչի սինթետիկ, 1/	6000	4000
71	Յուղման համակարգի լվացման հեղուկ 1/իտր	0	0
72	Յուղի գտիչ	5000	3000
73	Յուղի ռադիատոր	0	0
74	Վառոցքի կոճ	15000	5000
75	Արտածման կալեկտոր աջ	10	10
76	Արտածման կալեկտոր ձախ	10	10
77	Ներածման կալեկտոր աջ	10	10
78	Ներածման կալեկտոր ձախ	10	10
79	Արտածման կալեկտորի աջ միջադիր	10	10

80	Արտածման կալեկտորի ծախ միջադիր	10	10
81	Ներածման կալեկտորի աջ միջադիր	10	10
82	Ներածման կալեկտորի ծախ միջադիր	10	10
83	Վառոցքի մոմ	6000	3000
84	Բենզոլաբաքի բենզոլիչի ցանց	0	0
85	Բենզոլիչ	0	0
86	Բենզոլաբաք	0	0
87	Ինժեկտորի բոցամուղ բենզոլիչի շարժիչի	0	0
88	Բոցամուղիխտաբուկ	0	0
89	Վառելանյութի մղիչ էլեկտրական	18000	10000
90	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	20000	5000
91	Վառելիքի կոշտ մաքրման գտիչ	0	0
92	Վառելանյութի խողովակ	10	10
93	Օդի գտիչ	6000	4000
94	Օդի ծախսաչափիչ	10	10
95	Օդի գտիչի փողրակ	10	10
96	Ջերմաստիճանային տվիչ	10	10
97	Յուղի տվիչ	10	10
98	Բաշխիչ լիսեռի տվիչ	10	10
99	Օդի ծախսի տվիչ	10	10
100	Արագաչափի տվիչ	10	10
101	Հովհարի տվիչ	10	10
102	Ջրի խողովակ երկար	5000	5000
103	Ջրի խողովակ կարճ	2000	2000
104	Ջրի տվիչ	10	10
105	Բենզոլաբաքի տվիչ	10	10
106	Մարման ընթացքի կարգավորիչ	10	10
107	Դեկավարման համակարգիչ	10	10
108	Պարապ ընթացքի տվիչ	10	10
109	Թթվածնի տվիչ	10	10
3. Սառեցման և արտածման համակարգ			
110	Հովհար	10	10
111	Հովհարի շարժիչ	10	10
112	Հովհարի թեանով	10	10
113	Ռադիատոր	55000	28000
114	Ընդարձակ լիքի փական	1000	500
115	Ընդարձակ լիքի փողրակ	1000	500
116	Ընդարձակոլիք	1000	500
117	Ռադիատորի փողրակ ներքևի	5000	2000
118	Ռադիատորի փողրակ վերևի	1000	500
119	Թերմոստատ	12000	8000
120	Ջրի մղիչ	25000	12000

121	Զրի մղիչի միջադիր	0	0
122	Զրի պոմպի խտաբուկ	0	0
123	Զրի պոմպի առանցքակալ	0	0
124	Զրի պոմպի թևակ	0	0
125	Սառեցման հեղուկ 1 լիտր	4000	4000
126	Զսառչող հեղուկ ապակիների համար	2000	2000
127	Զգիչ հոլովակի	7000	4000
128	Փոկ մեծ	9000	6000
129	Հովացման համակարգի ռետինե խողովակ	10	10
130	Ծորակ	10	10
131	Փոկանիվ գեներատորի փոկի	10	10
132	Միջադիր թերմոստատի	10	10
133	Խլարարի ներդիր	10	10
134	Խլարարի կախոց	10	10
135	Խլարարի խողովակ	10	10
136	Կրոնշտեյն	10	10
137	Խլարարի անուր (Խամուտ)	10	10
138	Խլարար	10	10
139	Շարժիչ վառարանի	10	10
140	Վառարանի ռադիատոր	10	10
	4. Կցորդում և ՓՏ		
141	Կցորդման աշխատանքային գլան	0	10000
142	Կցորդման գլխավոր գլան	0	0
143	Կցորդման գլխավոր գլանի կալունակ	0	0
144	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	0	0
145	Կցորդման սեղմող սկավառակ	0	20000
146	Կցորդման տարվող սկավառակ	0	15000
147	Կցորդման առանցքակալ	0	5000
148	Կցորդման ոտնակ	0	10
149	Կցորդման ճոպան	0	10
150	ՓՏ-ի յուղ	15000	5000
151	ՓՏ-ի պատյան	0	0
152	ՓՏ-ի առջևի խտաբուկ	2000	2000
153	ՓՏ-ի հետևի խտաբուկ	2000	2000
154	Վազքաչափի շարժաբեր	0	0
155	ՓՏ-ի առանցքակալ	2000	2000
156	ՓՏ-ի փոխանցման փոշեթիկնոց	0	0
157	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմ	0	0
158	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0	12000
159	ՓՏ-ի երկրորդային լիսեռ	0	10000
160	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	0	0

161	ՓՏ-ի երկժանի	0	0
162	ՓՏ-ի ատամնանիվ	0	0
163	Համաժամիչ	0	0
164	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	0	0
165	Հերմետիկ	5000	5000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ			
166	Բաշխիչ տուփ	0	0
167	Բաշխիչ տուփի խցուկ	0	0
168	Բաշխիչ տուփի առանցքակալ	0	0
169	Բաշխիչ տուփի ատամնանիվ	0	0
170	Բաշխիչ տուփի լիսեռ	0	0
171	Կարդանային լիսեռ	0	0
172	Էլաստիկ մուֆտ	0	10000
173	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	0	8000
174	Կարդանային լիսեռի խաչուկ	0	8000
6. Առջևի և հետևի կամրջակներ			
175	Հետևի կամ առջևի կամրջակ	0	0
176	Ուեդուկտոր	0	0
177	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	0	0
178	Դիֆֆերենցիալ	0	0
179	Դիֆֆերենցիալի սատելլիտ	0	0
180	Տանող ատամնանիվի խցուկ	0	0
181	Տանող ատամնանիվի առանցքակալ	0	0
182	Դիֆֆերենցիալի առանցքակալ	0	0
183	Ձախ կամ աջ կիսաստնու փոշեթիկնոց	0	0
184	Կիսաստնի	0	0
185	Կիսաստնու առանցքակալ	8000	8000
186	Կիսաստնու միջադիր	0	0
187	Կիսաստնու խցուկ	3000	3000
188	Կարգավորիչ տափողակ	0	0
7. Կախոց			
189	Տրավերս	0	0
190	Կրոնշտեյն	500	500
191	Աջ կամ ձախ հողակապ	45000	20000
192	Անվակունդ	40000	0
193	Անվակունդի խցուկ	0	0
194	Անվակունդի ներքին առանցքակալ	0	8000
195	Անվակունդի արտաքին առանցքակալ	0	0
196	Հետևի անվակունդի առանցքակալ	0	8000
197	Հարվածամեղմիչի թասակ	13000	8000
198	Զսպանակ	0	0

199	Առջևի հարվածամեղմիչ	30000	15000
200	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	5000	2000
201	Հարվածամեղմիչի վռան	0	1000
202	Ներքևի լծակ	0	0
203	Ներքևի լծակի վռան	5000	3000
204	Վերևի լծակ	0	2000
205	Շկվոռնի	0	5000
206	Ռեզրավոյ	0	6000
207	Վերևի լծակի վռան	0	2000
208	Գնդե հողակապ	12000	8000
209	Առջևի կայունարար	0	0
210	Առջևի կայունարարի վռան	2500	2000
211	Առջևի կայունարարի կանգնակ	12000	6000
212	Հետևի զսպանակ	0	0
213	Ճոճանակային լծակ	0	0
214	Ճոճանակային լծակի վռան	0	15600
215	Հետևի ցնցամեղմիչ	25000	15000
216	Հետևի մետաղաձող (շտանգա)	0	0
217	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	0	0
218	Հետևի անկյունագծային լծակ	0	0
219	Անկյունագծային լծակի վռան	5000	2000
220	Զսպակ (ռեստորա)	0	0
221	Զսպակի վռան	0	1000
222	Զսպակի միջադիր	0	1000
223	Զսպակի բռնիչ	0	0
224	Աջ կամ ձախ ձգան	10000	8000
	8. Ղեկային մեխանիզմ		
225	Ղեկային կալուն	0	31700
226	Ղեկային կալունի առանցքակալ	5000	0
227	Ղեկային կալունի վերանորոգման կոմպլեկտ	10000	0
228	Ղեկային կալունի խաչուկ	10000	5000
229	Հիդրոուժեղարարի փոկ	10	10
230	Հիդրոուժեղարարի պոմպ	10	10
231	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	10	10
232	Ձգան մեջտեղի	10	10
233	Ղեկային ձող	10	10
234	Ղեկային ձողի ծայրակալ	10	10
235	Հիդրոուժեղարարի յուղ, 1լ.	6000	10
236	Ճոճանակ	0	10
237	Ճոճանակի վռան	0	10
	9. Արգելակային համակարգ		

238	Գլխ. գլան	0	5000
239	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0	0
240	Վակուումային ուժեղարար	0	5000
241	Բանվ. գլան	0	0
242	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0	0
243	Արգելակային փողրակ	1000	1000
244	Սուպպորտ	0	0
245	Արգելակային հեղուկ	3000	250
246	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	25000	15000
247	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	20000	15000
248	Առջևի արգելակային սկավառակ	25000	15000
249	Ձեռքի արգելակի ճոպան	100	100
250	Ձեռքի արգելակի լծակ	500	100
	10. էլեկտրասարքավորում		
251	Գեներատոր	0	0
252	Գեներատորի դիողային կամրջակ	15000	10000
253	Գեներատորի ռելե	5000	5000
254	Գեներատորի առանցքակալ	2000	2000
255	Ստարտեր	0	0
256	Ստարտերի ռելե	2000	5000
257	Ստարտերի ածուխ	20000	5000
258	Բենդեքս	5000	5000
259	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	10	10
260	Առջևի լապտեր	10	10
261	Հետևի լապտեր	10	10
262	Հակամշուշային լապտեր	10	10
263	Առջևի թարթիչ	10	10
264	Հետևի թարթիչ	10	10
265	Արգելակային լապտեր	10	10
266	Խցիկի լապտեր	10	10
267	Խցիկի լապտերի լամպ	10	10
268	Արգելակային լապտերի լամպ	1000	1000
269	Առջևի թարթիչ լապտերի լամպ	1000	1000
270	Հետևի թարթիչի լապտերի լամպ	10	10
271	Հետևի լապտերի լամպ	10	10
272	Հակամշուշային լապտերի լամպ	10	10
273	Արգելակային լապտերի լամպ	10	0
274	Առջևի լապտերի լամպ	5000	3500
275	էլեկտրական անջատիչ	0	0
276	էլեկտրական տվիչ	0	0
277	Տախտմետր	0	0

278	Ապակեմաքրիչ	3500	2000
279	Բռնկման կողպեք	10	10
280	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	10	10
281	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	10	10
282	Վառոցքային լարերի խուրց	10	9000
283	Վառոցքի մոմի ծայրակալ	2000	0
284	Վազբաչափ	60	0
285	Վազբաչափի ճուպան	10	0
286	Դռան կողպեք	10	0
287	Ազդանշան	10	0
288	Ապակեվկացիչի բաչոկ	10	0
289	Ապակեվկացիչի շարժիչ	10	0
290	Դռների կենտրոնական փական	10	0
291	Հայելի կողային	10	10
292	Դռան ապակու ամբարձիչ	10	10
293	Դռան ապակու էլեկտրամբարձիչի շարժիչ	4500	10

*** Լրացվում են ծառայությունների մատուցման և ապրանքների գնացուցակի բոլոր տողերը, ծառայությունների մատուցումը տվյալ տողի համար անվճար կատարվելու դեպքում լրացվում է 0/գրո/: Գինը ներառում է բոլոր հարկերը և տուրքերը:**

** Բոլոր մասերը որոնք ոչ թե պետք է վերնորոգել այլ պետք է փոխարինել, պետք է լինեն նոր, և տեղադրվեն մեկ անգամ (յուրաքանչյուր ավտոմեքենայի համար, առնվազն՝

1. Կատարված աշխատանքների համար – 6 ամիս երաշխիքային ժամկետով
2. Պահեստամասերի համար – 12 ամիս երաշխիքային ժամկետով
3. Ռետինե դետալների համար – 6 ամիս երաշխիքային ժամկետով

Այլ պայմաններ

1. Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայաններ կայանելու օրվա և ժամի մասին:
2. Կատարողը հանձնման-ընդունման արձանագրության հետ Պատվիրատուին է ներկայացնում ավտոմեքենայի վերանորոգման և տեխնիկական սպասարկում կատարած աշխատող մասնագետների որակավորումները հավաստող փաստաթղթերը (վկայականներ, հավաստագրեր և այլն):
3. Կատարողը պարտավոր է SU-2 ի ժամանակ օգտագործել տվյալ ավտոմեքենայի արտադրող ընկերության կողմից արտադրված կամ նրա երաշխավորված այլ արտադրության պահեստամասեր և քսայուղեր՝ ինչպես նաև Պատվիրատուի պահանջով տրամադրել դրանց ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի պատճենը:
4. Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն 5 ամբարձիչներով՝ նվազագույնը երեք տոննա բարձրացնելու կարողությամբ:
5. Տեխ. Սպասարկման կայանը պետք է ունենա դիտափոս, անվաբացքի կարգավորման ստենդ, ինժեկտորի լվացման և կարգավորման ստենդ, արգելակների ստուգման ստենդ, էլեկտրական բնույթի խափանումները վերացնելու հնարավորություն, ավտոփականագործ, շարժիչագործ, ավտոէլեկտրիկ, ինժեկտորային մասնագետ, ախտորոշման /դիագնոստիկ սարք նշված ավտոմեքենաների ծրագրով, կատարի շարժիչի և նրա համակարգերի, ուժային և ղեկավարման համակարգերի ընթացային մասի և թափքի ինչպես ընթացիկ այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ
6. Պետք է ապահովված լինի փակ և պահպանվող տարածքով՝ պահակային ծառայության կողմից 24 ժամ հսկողություն իրականացվող մինչև 20 և ավելի ավտոմեքենայի համար: Կատարողը պատասխանատու է տեխսպասարկման կայան ընդունած ավտոմեքենայի պահպանման համար:
7. Պետք է ունենա ավտոքարշակ՝ 3.5 տոննա նվազագույն բեռնատարողությամբ, որը կանչը ստանալուց հետո առնվազն 30 րոպեի ընթացքում կարող է դուրս գալ տեխնիկական սպասարկման կայանից դեպի վթարված ավտոմեքենայի գտնվելու վայր:
8. Կատարողը պետք է ունենա ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ առնվազն մեկ տեխսպասարկման կայան Երևան քաղաքում:

9. Ավտոմեքենայի անհրաժեշտ նորոգման և տեխնիկական սպասարկման համար Կատարողը պարտավոր է պատվիրատուի նշված ժամկետում և պահանջով ընդունել ավտոմեքենան SU կայան և անմիջապես իրականացնել ախտորոշման, անհրաժեշտ քանդման, ապամոնտաժման, զննման և գնահատման աշխատանքներ:
10. Յուրաքանչյուր ավտոմեքենայի սպասարկման և նորոգման համար պատվիրատուի պահանջով կատարողի կողմից կազմվում, կնքվում և պատվիրատուին է ներկայացվում նախնական զննման և գնահատման ակտ:
11. Ավտոմեքենաների սպասարկումը պետք է կատարվի արտահերթ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սոցիալական ապահովության ծառայություն
 ՀՎՀՀ 02505511
 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
 վարչություն
 Հ/Հ 900011556355

[Handwritten Signature]
 /ստորագրություն/
 Կ.Տ



ԿԱՏԱՐՈՂ

Ֆլեշ Մոտորս ՍՊԸ
 ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
 ՀՎՀՀ 00873228
 ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
 Հ/Հ 1510012745550100
 Ա. Լալայան



/ստորագրություն/

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Որամ»

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության										Ընդամենը			
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր		
1	50111130-1	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	-	-	-	1465408	1465408	1465408	2512128	2512128	2512128	4186880	4186880	4186880	4186880	4186880
2	50111130-2	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	-	-	-	525000	525000	525000	900000	900000	900000	1500000	1500000	1500000	1500000	1500000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ



ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սոցիալական ապահովության ծառայություն
 ՀՎՀՀ 02505511
 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
 Հ/Հ 900011556355


 /ստորագրություն/
 Կ.Տ


ԿԱՏԱՐՈՂ

Ֆլեշ Մոտորս ՍՊԸ
 ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
 ՀՎՀՀ 00873228
 ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
 Հ/Հ 1510012745550100
 Ա. Լալայան


 /ստորագրություն/
 Կ.Տ


Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____ ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____ ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն